ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1031 - Ա

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշումը՝

1. Արբիտրաժային գործով Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնող «Bredin Prat» ընկերության համապատասխան ներկայացուցիչների հետ արբիտրաժային գործի ընթացքի, հետագա ռազմավարությանը վերաբերող հարցերի շուրջ քննարկում անցկացնելու, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի տարբեր մարմինների բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ ճանաչողական հանդիպումներ, քննարկումներ և այցեր ունենալու նպատակով՝ Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ Կարեն Անդրեասյանին 2025 թվականի նոյեմբերի 15-20-ը ներառյալ գործուղել Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ՝ նոյեմբերի 15-16-ը, Ստրասբուրգ՝ 16-20-ը):

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին՝ սահմանված կարգով ապահովել Կարեն Անդրեասյանի գործուղման հետ կապված ծախսերի հատուցումը:

3. Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչին՝ գործուղումից վերադառնալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում օրենսդրությամբ

նախատեսված հաշվետվությունները ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

13.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ